

# ««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում՝

- 2-րդ մասում.

ա. «առաջարկությամբ առնվազն հինգ» բառերը փոխարինել «առաջարկությամբ առնվազն երկու» բառերով,

բ. «ընդգրկում է առնվազն հինգ» բառերը փոխարինել «ընդգրկում է առնվազն երկու» բառերով,

- 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Որակավորման քննություններին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք:»:

**Հոդված 2.** Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «նվազագույնը հինգ» բառերը փոխարինել «նվազագույնը երկու» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 24-րդ հոդվածում.

- 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կարգավիճակը

ծագում է սույն օրենքով սահմանված կարգով, լիազոր մարմնում հաշվառվելու պահից սկսած: Լիազոր մարմնում կարող են հաշվառվել առավելագույնը երեք ինքնակարգավորվող կազմակերպություններ:»:

- 5-րդ մասում «30» թիվը փոխարինել «10» թվով:

**Հոդված 4.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «30» թիվը փոխարինել «10» թվով:

## **Հոդված 5. Եզրափակիչ մաս**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ  
Վ.Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան, 2024 թ.- -